

զան Տեառն մերոյ Բենեգիկոսոսի ԺԳ. Սահմանագրութիւն», թարգմանեալ ի հայ: Գրած է նաեւ վկայական 1796ին ի Հոռոմ տպուած «Սկզբունք մնական գիտութեանց» գրքին: Ունի ձեռագիր ընդօրինակութիւններ եւ նամակներ (Դիւ Անտ.):

Սոյն վերջին ընդօրինակութեան յիշատակարանին մէջ Բաղինեան կը գրէ. «Օրինակեցաւ սա ի գաղափառէն Յովհաննիսի Բիւզանդիացւոյ արժանաւոր քահանայի մականուամբ Գուրսունեան կոչեցելոյ»: Կ'երեւայ թէ Բաղինեան կը շփոթէ Կ.Պոլսեցի Յովհ. Ա. Տուրսունեանը, Ջմիւռնիացի Յովհ. Ա. Աղարեանին հետ, ինչպէս յայտնի կ'երեւայ վերջնոյս խօսքերէն, որ նոյն ձեռագրին մէջ իր մասին տեղեկութիւն կու տայ: Յովհ. Ա. Տուրսունեան 1773—1780ի միջոցներուն Լիվոնոյ էր (Ուղուր. 139), ինչպէս նաեւ 1787ին, որ յայտնի է թոյմ. Մեծօփեցւոյ մէկ ձեռագրին (Մատ. Անտ. թիւ 2Ա.) յիշատակարանէն: «Այս գիրքս օրինակեալ եղև ի լաւ եւ սրբագիր օրինակէ, գրչութեամբ Գէորգայուրումնուաստի Կ.Պոլսեցւոյ ի թուականութեանն Հայոց ՌՄԼԶ (= 1787), ի մարտի ԺԸ ի թագաւորեալ քաղաքն Կ.Պոլիս: Էւ անտի վերստին օրինակեալ եղև ձեռամբ նուաստի ուրումն Աբեղայի տուրսունեան յովհաննէս կոչեցելոյ ի մեծէն Պոլսոյ ի վերոյ գրեալ թուականութեանն Հայոց ի Սեպտեմբերի ԺԸ ի լիգուռնա (= Լիվոնոյ) աւագ դքսական քաղաքի: »